# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Դեկտեմբերի 2-ին, շաբաթ.- Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Դեկտեմբերի 3-ին, կիրակի.- Բ. կիրակի Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մարկոս աբեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Դեկտեմբերի 7-ին, հինգշաբթի.- Սրբոց հարցն եգիպտացւոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գբնեցւոյն, Յովհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Միխանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի և այլոց սրբոց հարցն:***

Այսօր, կեսօրին, Մայր Տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1988 թ. աղետալի երկրաշարժի հազարավոր զոհերի:

***Դեկտեմբերի 10-ին, կիրակի.- Գ. կիրակի Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Դեկտեմբերի 17-ին, կիրակի.- Դ. կիրակի Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Դեկտեմբերի 24-ին, կիրակի.- Ե. կիրակի Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արիստակես աբեղա Այվազյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Դեկտեմբերի 25-ին, երկուշաբթի.- Սրբոյն Ստեփաննոսի նախասարկավագին և առաջին մարտիրոսին:***

Այսօր Մայր Տաճարում, Ս. Հովհաննու Կարապետի Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: Հընթացս Ս. Պատարագի, Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի ձեռամբ, կատարվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ավարտական լսարանի 14 սաների և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի 2 սաների սարկավագական ձեռնադրությունը: Ձեռնադրության ավարտին պատարագիչ Սրբազան Հայրը «Երանի՜ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Դեկտեմբերի 31-ին, կիրակի.- Զ. կիրակի Յիսնակաց: Բ. օր Ծննդեան պահոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: